ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/76

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.06.2018թ. թիվ 03/26-3/10377-18 գրությամբ «Լուսալ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 06952373/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.06.2018թ. թիվ ԴՎԱ/2023 գրության հիման վրա, 08.06.2018թ. նախաձեռնել է «Լուսալ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.06.2018թ. թիվ ԴՎԱ/2023 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 21-րդ, 29-րդ և 82-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Լուսալ» ՍՊԸ-ն, որին անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացվեց պայմանագրի նախագիծը և առաջարկվեց կնքել պայմանագիր: Սակայն «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից 25.05.2018թ. գնահատող հանձնաժողովի անունով ներկայացվեց գրություն առ այն, որ «Լուսալ» ՍՊԸ-ն հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Քննարկելով «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 21-րդ, 29-րդ և 82-րդ չափաբաժինների մասով մերժել «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.16 կետը՝ վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմին»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Լուսալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լուսալ» ՍՊԸ-ն 14.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Լուսալ» ՍՊԸ-ն հայտնում է իր անհամաձայնությունը վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է գնանշման հարցում դեռևս 2018թ. փետրվար ամսին, հայտերը բացվել են 20.02.2018թ. ժամը 12:00-ին,

սակայն Պատվիրատուի կողմից հրավերով սահմանված հավելված 6-ը և հավելված 6.1-ը պահանջվել են 2018թ. ապրիլ ամսվա սկզբին և մեր կողմից ներկայացվել 04.06.2018թ. (մեր կողմից առաջարկվող պրանքները մեր գործընկերների պահեստներում սպառվել են 15.04.2018թ. դրությամբ և անհնար է դարձել տվյալ ապրանքների մատակարարումը), ինչը տեղի է ունեցել Պատվիրատուի կողմից գնման գործընթացը «Գնումների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի և ժամկետների խախտմամբ կազմակերպելու արդյունքում: «Լուսալ» ՍՊԸ-ն գնային առաջարկ պատվիրատուներին ներկայացնում է՝ առաջնորդվելով միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով, այլ ոչ թե կանխատեսումներով, թե տվյալ պատվիրատուն փետրվար ամսին հայտարարված գնանշման հարցման համար պայմանագիր կառաջարկի կնքել մայիս ամսին, ինչպես նաև նախաձեռնած ընթացակարգի վերաբերյալ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Պատվիրատուն մասնակցի տվյալները լիազոր մարմնին ուղարկել է սահմանված ժամկետի խախտմամբ»:

Ընկերությունը ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/76 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.06.2018թ. թիվ 03/26-3/10377-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.06.2018թ. թիվ ԴՎԱ/2023 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Լուսալ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.02.2018թ. նիստի թիվ 4, 11.04.2018թ. նիստի թիվ 5, 20.04.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությունները, «Լուսալ» ՍՊԸ-ի 14.06.2018թ. հայտնած գրավոր

դիրքորոշումը և պատվիրատուի 21.06.2018թ. թիվ ԴՎԱ/2919 գրությամբ հայտնած առարկությունը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Լուսալ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 20.02.2018թ. կայացած նիստի N 4 արձանագրության 4.1 կետով (Հավելված N1) որոշել է «Լուսալ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ 20-րդ, 21-րդ, 29-րդ և 82-րդ չափաբաժինների մասով:

11.04.2018թ. կայացած նիստի N 5 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին (ներկայացված է այլ ապրանքատեսակի տեխնիկական բնութագիր) և առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

20.04.2018թ. կայացած նիստի N6 արձանագրության Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում և կարգով առկա անհամապատասխանությունները «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից չշտկվեցին, և որոշել է 20-րդ չափաբաժնի մասով «Լուսալ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

02.05.2018թ. կայացած նիստի N7 արձանագրության 1.3 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ որոշել է 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխանող «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Սակայն, «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից 25.05.2018թ. գնահատող հանձնաժողովի անունով ներկայացվել է գրություն առ այն, որ «Լուսալ» ՍՊԸ-ն հրաժարվում է պայմանագիրը կնքելուց:

29.05.2018թ. կայացած նիստի N8 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովը՝ քննարկելով «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը՝ որոշել է 21-րդ, 29-րդ և 82-րդ չափաբաժինների մասով մերժել «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.16 կետը՝ վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

• 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Հրավերի՝

- 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:
- 9.6 կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Պատվիրատուն «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2018թ. ներկայացված առարկություն-պարզաբանման վերաբերյալ 21.06.2018թ. թիվ ԴՎԱ/2919 գրությամբ ներկայացրել է առարկություն՝ հայտնելով հետևյալը.

«Լուսալ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2018թ. ներկայացված առարկություն-պարզաբանումն անհիմն է և դրանում ներառված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես, «Լուսալ» ՍՊԸ-ին որակավորման փաստաթղթերը ներկայացնելու առաջարկն ուղարկվել է 03.04.2018թ., իսկ Ընկերությունը դրանք ներկայացրել է 06.04.2018թ., այլ ոչ թե 04.06.2018թ., ինչպես նշված է Ընկերության գրության մեջ:

Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի իրականացման ժամկետների երկարատևությունը Պատվիրատուն բացատրել է այն հանգամանքով, որ Ընթացակարգի տարբեր փուլերում կազմակերպվել են բանակցություններ, առկա են եղել շտկումներ, և այլն, ընդ որում, Ընթացակարգը բաղկացած է եղել թվով 97 չափաբաժիններից, որոնց հայտ են ներկայացրել թվով 33 մասնակիցներ, ուստի armeps համակարգում էլեկտրոնային գնահատումն իրականացվել է տևական ժամանակ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Լուսալ» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 21-րդ, 29-րդ և 82-րդ չափաբաժինների մասով, սակայն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Հավելված 6.1 (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը) Ընկերության կողմից Հանձնաժողովին է ներկայացվել 06.04.2018թ.:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Լուսալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.06.2018թ. թիվ 03/26-3/10377-18 գրությամբ «Լուսալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Լուսալ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**